«ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 135
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝	*Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում*
Առարկա՝	*Հայոց եկեղեցու պատմություն*
Ուսուցիչ՝	*Երևանի Միսաք Մեծարենցի անվ. հ. 146 հիմնական դպրոց Ներսեսյան Սուսաննա Ցոլակի*
Վերապատրաստող՝	*Քրիստինե Հարթենյան*

ԵՐԵՎԱՆ – 2022

Բովանդակություն

Ներածություն ……1

1. **Արժեք և արժեհամակարգ ……2**
2. **Դպրոցը և արժեհամակարգը ……..……..5**
3. **ՀԵՊ առարկան՝ սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում 6**

3.1.ՀԵՊ առարկան՝ համաքրիստոնեական արժեքների համատեքստում…10

3.2.Հայ ժողովրդի արժեհամակարգի արտացոլումը ՀԵՊ ծրագրում ……12

Եզրակացություններ, առաջարկություններ……16

Օգտագործված գրականության ցանկ ……18

Ներածություն

«Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում» թեմայով աշխատանքը սկսել ենք այն հարցը վերհանելուց, թե ինչ է «արժեքը» և «արժեհամակարգը»: «Արժեք» բառի սկզբնաղբյուր է համարվում ֆրանսերեն «valoir» բառը, որը մեկնաբանվում է որպես «արժանի լինել»: Եթե որևէ երևույթ կարևոր է, նշանակալի է, օգտակար է, ապա այն արժեք է: Բառարաններում ևս հանդիպում ենք «արժեք» բառի նման մեկնաբանություն: Եվ այդ արժեքը կողմնորոշիչ, ուղեցուցային դեր է ունենում մարդու բոլոր տեսակի գործողություններում:

Արժեքներն իրենց հերթին ձևավորում են «արժեհամակարգ», մի եզրույթ, որը փիլիսոփայության մեջ մեկնաբանվում է որպես ամբողջություն այն արժեքների, որն անհատը գնահատում է իր շրջապատում:

Արժեքների տարբեր դասակարգումներ կան, Ն. Ս. Ռոզովն, օրինակ, կատարել է հետևյալ դասակարգումը. 1. մարդասիրական արժեքներ՝ մարդու իրավունքներ և արժանապատվություն: 2. Սոցիալական արժեքներ՝ առանձին մարդկանց և խմբերի փոխադարձ գործունեություն քաղաքական, տնտեսական, իրավական ոլորտում: 3. Մշակութային արժեքներ՝ արվեստ, կրոն, բարոյականություն, ազգային և էթնիկ ավանդույթներ: 4.էկոլոգիական արժեքներ՝ շրջապատող բնություն, շրջակա միջավայր:

Զարգացած անհատի համար անշուշտ, կարևոր է համամարդկային արժեքների ճանաչումը, սակայն դա հնարավոր է իրականացնել սեփական ազգային արժեքները ճանաչելու և հարգելու ճանապարհով, այդ իսկ պատճառով Հայաստանում հանրակրթությունն իրականացվում է ազգայինի հենքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ: Եվ այս առումով դպրոցում չափազանց մեծ է հայրենագիտական առարկաների՝ հայոց լեզվի ու գրականության, հայոց պատմության և «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դերը:

Այս աշխատանքի նպատակն է վերհանել ՀԵՊ առարկայի դերը համամարդկային և հայ ազգային արժեքներով տոգորված անհատի ձևավորման գործում: Հիշենք, որ հայ ժողովրդի հոգևոր-մշակութային, հոգևոր-ազգային արժեքները ձևավորվել են նաև Հայոց եկեղեցու ազդեցության և մասնակցության պայմաններում, դրանք խորապես կապված են Հայ Առաքելական դավանանքի հետ: Հետևաբար Հայոց եկեղեցու պատմությունը աճող սերնդի համար կարևոր նշանակություն ունի սոցիալական-մարդասիրական գիտելիքներ ձեռք բերելու և այդ արժեքներին հաղորդակցվելու առումով:

Աշխատանքի ընթացքում ոչ միայն թեմայի լույսի ներքո ներկայացվում ու մեկնաբանվում է արդեն իսկ դպրոցում ներդրված ՀԵՊ առարկայի ծրագրի ու դասագրքերի նյութը, այլև արվում են առաջարկություններ, թե ինչ կարելի է անել առարկայի դասավանդումն ավելի արդյունավետ դարձնելու, ազգային արժեհամակարգն ավելի շահեկան ներկայացնելու և մեկնաբանելու տեսանկյունից:

1. **Արժեք և արժեհամակարգ**

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման խնդրի քննարկումը ցանկանում ենք սկսել այն հարցի մեկնաբանությունից, թե ինչ է արժեքային համակարգն առհասարակ: «Արժեք» բառի սկզբնաղբյուր է համարվում ֆրանսերեն «valoir» բառը, որը մեկնաբանվում է որպես «արժանի լինել»: Եթե որևէ երևույթ կարևոր է, նշանակալի է, օգտակար է, ապա այն արժեք է: Բառարաններում ևս հանդիպում ենք «արժեք» բառի նման մեկնաբանություն:[1] Եվ այդ արժեքը կողմնորոշիչ, ուղեցուցային դեր է ունենում մարդու բոլոր տեսակի գործողություններում:

[1] Տե՛ս 1. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Լեզվի ինստիտուտ, Եր., 1969-1980,
2. Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Մ. Սուքիասյան, Եր., 1967:

Արժեքները ձևավորում են «արժեհամակարգ», մի եզրույթ, որը փիլիսոփայության մեջ մեկնաբանվում է ամբողջություն այն արժեքների, որն անհատը գնահատում է իր շրջապատում[2]:

Մարդկության զարգացման տարբեր փուլերում տարբեր պատկերացումներ ու մեկնաբանություններ են եղել «արժեք» եզրույթի մասին: Ուշագրավ են նախորդ դարում փիլիսոփայության՝ արժեքների բնույթն ուսումնասիրող «ակսիոլոգիա»՝ «արժեքաբանություն» (հունարեն՝ ἀξία – արժեք և λόγος - բան, խոսք, բառացի՝ ուսմունք արժեքների մասին) անունը կրող ուսմունքի ձեռքբերումները: Այս ուսմունքն ուսումնասիրում է արժեքների բնույթը, ամբողջական արժեքային համակարգը, տարբեր արժեքների հարաբերակցությունը[3]:
«Արժեք» հասկացության հետևյալ մեկնությունն է տալիս Կ. Քլաքհոնը. «Հասկացություն՝ բացահայտ կամ թաքնված, որը տարբերակում է անհատին կամ բնութագրական է խմբի համար, որն ընտրության ազդեցություն է կրում հասանելի եղանակներից, իմաստներից և գործողություններից»[4]:

Արժեքների ուսումնասիրության բնագավառում ուրույն հետազոտություն է կատարել Ճ. Ճվարցը: Ըստ հեղինակի, երբ մարդ մտածում է արժեքների մասին, առաջին հերթին առանձնացնում է, թե որ արժեքներն են առավել կարևոր իր համար կյանքում: Որոշակի կոնկրետ արժեք կարող է կարևոր լինել մեկի համար, բայց բացարձակ անկարևոր մյուսի համար: Արժեքների տեսություններում կարևորվում է այն հայեցակարգը, որտեղ առանձնացվում են արժեքների ներքոնշյալ վեց հատկանիշները.

- ✓ Արժեքները համոզմունքներ են: Մարդիկ, որոնց համար անկախությունը կարևոր արժեք է, «սթափվում» են , երբ նրանց անկախությունը վտանգվում է, հուսահատվում են, երբ անկարող են լինում այն պաշտպանելու, և վերջապես երջանիկ են, երբ կարող են վայելել այն:

---

[2] https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84

[3]https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6
[4] Մեջբերվում ըստ՝ http://www.ysu.am/files/Article_Anush_Mkrtchyan.pdf:

✓ Արժեքները կապված են ցանկալի նպատակների հետ, որոնք մոտիվացնում են մարդուն կատարելու որոշակի գործողություններ: Մարդիկ, որոնց համար հասարակական կարգը, արդարությունը կարևոր արժեքներ են, մոտիվացված են հետապնդել այդ նպատակները:

✓ Արժեքները լայն և ընդգրկուն հասկացություններ են: Այս հատկանիշը տարբերակում է արժեքներն ավելի նեղ հասկացություններից, ինչպիսիք են նորմերը և մոտեցումները, որոնք սովորաբար վերաբերում են կոնկրետ գործողությունների, օբյեկտների կամ իրավիճակների:

✓ Արժեքները ծառայում են որպես սկզբունքներ կամ չափանիշներ: Արժեքներն ուղղորդում են մարդկանց որոշակի գործողությունների: Մարդիկ որոշում են, թե ինչն է լավ, ինչը՝ վատ, արդարացնում կամ մեղավոր են ճանաչում, գործում կամ խուսափում են՝ հենվելով իրենց համար թանկ արժեքների հնարավոր հաջորդականության վրա:

✓ Մարդու գործողություններն ուղղորդվում են բազմաթիվ արժեքներով: Ցանկացած վարքագծի կամ վերաբերմունքի վրա ազդում են ոչ թե մեկ, այլ բազմաթիվ արժեքներ:

Մանկավարժության տեսանկյունից կարևոր են Մ. Մեսսեյի հայացքները: Նրա կարծիքով՝ մարդու արժեքային համակարգը ձևավորվում է մի քանի փուլերի ընթացքում. 1-ին փուլը կոչվում է «դրոշմ» և տևում է երեխայի՝ մինչև 7 տարեկանը: Երեխաներն այս ընթացքում «սպունգի» նման ներծծում են իրենց շրջապատում տեղի ունեցող բոլոր երևույթները, բացի այդ՝ ընդունում են ամեն ինչ որպես բացարձակ ճշմարտություն, մանավանդ, եթե դա փոխանցում են ծնողները:

Երկրորդ փուլը «կրկնօրինակումն» է, որը սկսվում է 8 տարեկանում և տևում 5 տարի՝ մինչև 13 տարեկանը: Այս փուլում երեխաներն ավելի շատ կրկնօրինակում են իրենց ծնողներին ու իրենց շրջապատող մարդկանց՝ ուսուցիչներ, համադասարանցիներ, հարազատներ և այլն:

Երրորդ փուլը սոցիալականացման փուլն է: Այս ժամանակահատվածում, որը տևում է 13 տարեկանից մինչև 21 տարեկանը, պատանու համար շատ կարևոր է իր հասակակիցների

կարծիքը, նրանք գտնվում են նրանց ուղիղ ազդեցության ներքո, և արժեքների ձևավորման այս փուլում շատ մեծ ազդեցություն ունեն հուզական իրադարձությունները:

Իսկ ի՞նչ արժեքներ են կարևոր կրթության ոլորտի համար. այս հարցին անդրադարձել է Ն. Ս. Ռոզովը, նա դասակարգել է հետևյալ կերպ. 1.մարդասիրական արժեքներ՝ մարդու իրավունքներ և արժանապատվություն: 2. սոցիալական արժեքներ՝ առանձին մարդկանց և խմբերի փոխադարձ գործունեություն քաղաքական, տնտեսական, իրավական ոլորտում: 3.մշակութային արժեքներ՝ արվեստ, կրոն, բարոյականություն, ազգային և էթնիկ ավանդույթներ: 4.էկոլոգիական արժեքներ՝ շրջապատող բնություն, շրջակա միջավայր:[5]

Ինչպես նկատեցինք, «արժեք» և «արժեհամակարգ» հասկացությունները լայն ու տարբեր մեկնաբանություններ ունեն: Տվյալ դեպքում մեր խնդիրն է հասկանալ, թե ընդհանուր գծերով ինչպես է մեկնաբանվում արժեքային համակարգը մանկավարժության մեջ: Եթե մոտենանք ընդհանուր գծերով, ապա կարող ենք նկատել, որ մանկավարժության մեջ արժեհամակարգ ասելով հասկանում ենք անձի բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկ արժեքների ընդհանրությունը, որն անհրաժեշտ է մարդու ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

2.Դպրոցը և արժեհամակարգը

Որքան էլ տարբեր լինեն մոտեցումները «արժեք» և «արժեհամակարգ» հասկացությունների նկատմամբ, մի բան անվիճելի է. ցանկացած մարդու արժեհամակարգի ձևավորման գործում մեծ դեր ունի կրթական գործընթացը՝ դպրոցը: Անշուշտ, դպրոցի նպատակը ոչ միայն գիտելիքով օժտված անհատ ձևավորելն է, այլև նրա մեջ արժեքներ սերմանելը, այլ կերպ ասած՝ արժեքային կրթություն տալը: Եվ այստեղ խնդիր ունեն լուծելու հանրակրթական բոլոր առարկաները:

Կրթական համակարգում կարևորվում է սովորողի ոչ միայն գիտելիքների, այլև կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորումը,

[5] Маслов С.И. Эмоционально-ценностное образование младших школьников. Тула, 1999, с.124.

մասնավորապես, դպրոցի շրջանավարտը պետք է ճանաչի համաշխարհային քաղաքակրթության նվաճումները, հարգի մարդկային արժեքները:

Ակնհայտ է, որ համաշխարհային արդի զարգացումներն անմիջական ներգործություն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով տարբեր խնդիրներ: Եվ գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության պայմաններում կրթության դերն աճում է. «կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային որակներ»[6]:

Անշուշտ, կարևոր է համամարկային արժեքների ճանաչումը, սակայն դա հնարավոր է իրականացնել սեփական-ազգային արժեքները ճանաչելու և հարգելու ճանապարհով, այդ իսկ պատճառով Հայաստանում հանրակրթությունն իրականացվում է ազգայինի հենքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ:

Եվ այս առումով դպրոցում չափազանց մեծ է հայրենագիտական առարկաների՝ հայոց լեզվի ու գրականության, հայոց պատմության և «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դերը:

3. ՀԵՊ առարկան՝ սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում

Արդեն նշել ենք, որ աշխարհի հետ համընթաց քայլելու, համաշխարհային արժեքները ճանաչելու ճանապարհին կարևոր դեր ունի սեփական ժողովրդի անցած ուղին, պատմությունը, որդեգրած արժեքները ճանաչելը, դրանց հաղորդակցվելն ու պահպանելը: Ավանդական հոգևոր-ազգային արժեքները գնահատելու և պահպանելու ճանապարհով են ընթանում բոլոր քաղաքակիրթ երկրների կրթական համակարգերը:

Այս առումով չափազանց կարևոր է դպրոցում հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին, լեզվին վերաբերող առարկաների պատշաճ դասավանդումը, միջառարկայական կապերի

[6] Հանրակրթության պետական կրթակարգ, http://www.irtek.am/views/act.aspx?aid=25829:

ստեղծումը, աշակերտին ոչ միայն իբրև կրթված մարդ, այլև իբրև իր արմատները ճանաչող հայ մարդ դաստիարակելը: Քանի որ նման վարքագծից է նաև կախված մեր պետականության հետագա ճակատագիրը: Այս առարկաների շարքում անուրանալի է Հայոց եկեղեցու պատմություն առարկայի դասավանդումը:

«Հայ ժողովրդի հոգևոր-մշակութային, հոգևոր-ազգային արժեքները ձևավորվել են նաև Հայոց եկեղեցու ազդեցության և մասնակցության պայմաններում, դրանք խորապես կապված են Հայ Առաքելական դավանանքի հետ: Հետևաբար Հայոց եկեղեցու պատմությունը աճող սերնդի համար կարևոր նշանակություն ունի սոցիալական-մարդասիրական գիտելիքներ ձեռք բերելու և այդ արժեքներին հաղորդակցվելու առումով»[7]:

Քրիստոնեությունը համաշխարհային կրոն է, նրա գաղափարական և արժեքային համակարգն ու վարդապետությունը քրիստոնյա ժողովուրդների պատմական զարգացման մասն են, նրանց ազգային–հասարակական գիտակցության առանցքը: Նույն կերպ քրիստոնեությունը կարևոր տեղ ունի Հայոց պատմության մեջ. հայ եկեղեցու շնորհիվ ոչ միայն քրիստոնեությունը դարձել է մեր ժողովրդի ազգային նկարագրի անբաժանելի մասը, այլև եկեղեցին ինքը դարձել է հայ ժողովրդի պատմության կարևոր դերակատարը:

Անուրանալի է Հայ Առաքելական եկեղեցու ներդրումը հայ հոգևոր, կրթամշակութային արժեքների կերտման, պահպանման, հայոց պետականության ամրապնդման, իսկ պետականության բացակայության պայմաններում կամ սփյուռքում՝ ազգապահ-պանության գործում:

Այդուհանդերձ չպետք է մոռանալ, որ, հայ ժողովրդի ազգային-հոգևոր կառույց լինելով, մեր եկեղեցին նաև պատկանում է քրիստոնեական ընդհանրական եկեղեցուն, այսինքն՝ քրիստոնեական համամարդկային հիմնարար արժեքների ընդհանրական արժեքային համակարգի մի մասնիկն է, իսկ այդ արժեքներից են ազատությունը, արդարությունը, հանդուրժողականությունը, հարգանքը միմյանց և օտարների նկատմամբ և այլն:

---

[7] Հանրակրթական հիմնական դպրոցի (5-9-րդ դասարաններ) «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի չափորոշիչ

Եվ դասընթացի դասավանդման ժամանակ ուսուցչի խնդիրն է, նպատակն է աշակերտներին ազգային և համամարդկային արժեքներին ծանոթացնելու ու հաղորդակից դարձնելու միջոցով կերտել նրանց ազգային-հոգևոր նկարագիրը:

Այս ճանապարհին կարևորում ենք աշակերտներին ընդհանուր բարոյական արժեքներ և հասկացություններ սերմանելը. չէ՞ որ և՛ Հայաստանում, և՛ այլ երկրներում եկեղեցուն է վերապահված համամարդկային արժեքներ կրելն ու տարածելը: Այսինքն՝ դասընթացի շնորհիվ ձևավորվում է աշակերտների ընդհանուր աշխարհայացքը, հոգեբանությունը, բարոյական ըմբռնումները:

Հիշենք, որ երկար տարիներ՝ ԽՍՀՄ գոյության ընթացքում, ոչ միայն դպրոցը, այլև ողջ հասարակությանը փորձում էին «հեռու պահել» հայ եկեղեցուց ու նրա դավանած արժեքներից: Սակայն այժմ Հայոց եկեղեցու պատմության, կառուցվածքի, դավանանքի մասին գիտելիքներ ունենալը կարևոր է, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, եկեղեցին է տարիներ ի վեր եղել ազգային արժեքների պահպանողը մեր հասարակության մեջ:

Որպեսզի առարկան ավելի արդյունավետ իրականացնի իր առաքելությունը, այն է՝ հայ ժողովրդի մեջ վառ պահել ազգային գիտակցությունն ու ազգային արժեքների պահպանման կարևորությունը, հարկ է որդեգրել մանկավարժական առավել ճիշտ մոտեցումներ, առարկան պետք է հնարավորինս մատչելի լինի աշակերտների համար, պետք է հաշվի առնվեն աշակերտների տարիքային առանձնահատկությունները, սերտ կապ պետք է ապահովվի մյուս առարկաների հետ: Տարիներ շարունակ հայագիտական առարկաները դասավանդվել են առանց Հայոց եկեղեցու պատմության, այժմ այդ ամենը ամբողջացնելու, այդ ամենին մեր եկեղեցու դավանած արժեքները միավորելու ժամանակն է, ավելին՝ հայոց պատմության և մշակույթի շատ անցքեր ու երևույթներ ունեն հոգևոր-եկեղեցական գործոններ ու պատճառներ: Օրինակ՝ մեր դպրոցում չափազանց սերտ կապ է ապահովված երաժշտություն առարկայի հետ, և երեխաները սովորում և միջոցառումներին կատարում են նաև հոգևոր երգեր:

Յուրաքանչյուր ժողովրդի ինքնության առանցքը նաև տոներն են, որոնք ևս սերտորեն կապված են արժեքային համակարգի հետ: Եվ դրանցից շատերն ունեն ազգային-եկեղեցական իմաստ ու նշանակություն, և դա ևս դասավանդում է ՀԵՊ առարկայի շրջանակում, առարկան նպաստում է, որ աշակերտը հասու լինի այդ տոների և

արարողությունների իմաստին: Կարող են նշել նաև մեր առօրյա կյանքի ամենատարբեր կողմեր, որոնք ևս սերտորեն առնչվում են ազգային-եկեղեցական ավանդույթներին ու արժեքներին:

Այժմ ողջ աշխարհը կարծես փոքրանում է ու դառնում առավել միասնական: Հայաստանը ևս աստիճանաբար ավելի ու ավելի է ընդգրկվում համաշխարհային քաղաքակրթական գործընթացներում, որոնք ազդեցություն են ունենում նաև հոգևոր-բարոյական արժեքների բնագավառի վրա: Այդ առումով ՀԵՊ առարկան կարող է յուրօրինակ միջնորդի դեր խաղալ արևմտյան՝ համաեվրոպական կյանքի շատ արժեքներ ընկալելու հարցում, որովհետև դրանք նույնպես քրիստոնեական ընդհանուր արմատներ ունեն:

Եվ չափազանց կարևոր է ընդգծել, որ թեև խոսում ենք եկեղեցու պատմություն առարկայի մասին, սակայն ուսուցումը կատարվում է աշխարհիկ սկզբունքով, այն էթնոմշակութային, էթնոդավանական և քաղաքակրթական ուղղվածության կրոնագիտական կրթության տեսակ է՝ գիտամանկավարժական հիմնարար սկզբունքների ներգրավմամբ՝ նյութի մատչելիություն, տարիքային համապատասխանություն, գիտամեթոդական բազմազանություն, պահանջներին համապատասխան:

ՀԵՊ առարկայի ընթացքում աշակերտը հասու է դառնում քրիստոնեության հոգևոր, բարոյական, արժեքային համակարգի հիմունքներին: Դրանց միջոցով նրա մեջ ձևավորվում են բարություն, ընկերասիրություն, հավատարմություն, հարգանք ծնողների և ավագների նկատմամբ և այլ արժեքներ:

Նա սովորում է գիտակցել եկեղեցու դերը հայոց պատմության մեջ, հարգել ազգային ավանդույթները, տոները: Ընդլայնվում է նրա մտահորիզոնը: Ձևավորվում են նաև այլ արժեքներ՝ պարտքի գիտակցում պետության և հասարակության առջև, սեփական արարքների նկատմամբ պատասխանատու կեցվածք:

Հայ եկեղեցու պատմության ու մշակույթի վերաբերյալ գիտելիքներին զուգահեռ աշակերտը ստանում է այլ արժեքներ, որոնք նրան դարձնում են լիարժեք քաղաքացի, որը հարգում է հայրենակիցներին և օտարներին, դառնում ինչպես հասարակական, այնպես էլ ընտանեկան կյանքի ակտիվ անդամը, գիտակցում է իր իրավունքները և պարտականությունները:

3.1. ՀԵՊ առարկան՝ համաքրիստոնեական արժեքների համատեքստում

«Մի մարդ սերմեր է ցանում իր արտում: Սերմերի մի մասն ընկնում է **ճանապարհի եզրին**, և թռչունները ուտում են դրանք: Այն սերմերը, որ ընկնում են ապառաժի վրա, շուտ ծլում ու կանաչում են, բայց արևը ծագելուն պես **չորանում են**, քանի որ խորը արմատներ չեն ունենում: Որոշ սերմեր ընկնում են փշերի ու մոլախոտերի մեջ ու թեև ծլում են, բայց չեն հաջողում մեծանալ, քանի որ **փշերը խեղդում են դրանց**: Եվ, վերջապես սերմերի այն մասը, որ ընկնում է պարարտ հողի մեջ, աճելով՝ **առատ բերք է** տալիս» («Սերմնացանի առակը»)[8]:

Աստվածաշնչյան այս առակը կարող է լավագույնս օգնել ներկայացնելու արժեհամակարգի և այն գրագետ սերմանելու կարևորությունը կրթական, և ոչ միայն կրթական համակարգում: Այս առակը ուղենիշ է կրթական ոլորտի աշխատակիցների համար, որպեսզի նախ՝ ընտրեն ճիշտ սերմեր, տվյալ դեպքում արժեահամակարգ՝ սերմանելու համար, հետագայում նաև՝ պարարտ հող, որտեղ այդ սերմանած գաղափարները կկարողանան լիարժեք բերք տալ, ոչ թե չորանալ ու ոչնչանալ:

Ընդհանրապես, պետք է նշել, որ քրիստոնեական համընդհանուր գաղափարների տարածման ու ընկալման գործում կարևոր է ՀԵՊ առարկայի ծրագրում աստվածաշնչյան առակների ընդգրկվածությունը, որովհետև առակները մեծ դիդակտիկ նշանակություն ունեն, դրանց ու դրանց մեկնաբանման միջոցով երեխաները ընկալում են ավելի լավ ու ավելի մնայուն ներկայացված գաղափարներն ու արժեքները: Այս շարքում են նաև «Որոմների առակը», «Բարի սամարացու առակը», որոնց շնորհիվ տարածվում են տարբեր արժեքներ՝ բարություն, հարգանք, սեր, ուղղվելու հնարավորություն և այլն:

Ներկայումս աշխարհում ամենակարևոր արժեքներից է հարգանքը միմյանց իրավունքների նկատմամբ, հանդուրժողականությունը բոլոր մարդկանց նատմամբ՝ անկախ դավանանքից, մաշկի գույնից, ազգությունից: Կարող ենք ասել, որ այժմ այդքան գնահատված այս արժեքը ևս ներառված է ՀԵՊ առարկայի մեջ, դա քրիստոնեական ողջ աշխարհում հայտնի «Ոսկե կանոնն» է՝ «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց» (Մատթեոս 7:12; Ղուկաս 6:31): Պատահական չէ, որ

[8] https://www.imdproc.am/p/hayoc-ekeghecu-patmutyun/5-dasaran/nvor-ktakaran-38112/sermnacani-vorvomneri-araknery-38119/re-f206c704-f2da-4e89-8094-97e1924466c7

հայտնի Լեռան քարոզում Հիսուս Քրիստոսի այս խոսքերը դարձան ոչ միայն քրիստոնեական աշխարհի, այլ ողջ մարդկության ուղենիշը, դա հենց իրավունքները հարգելու և հանդուրժողականության հիմքն է: Այսինքն, մենք բոլորս ուզում ենք, որ մեզ հետ վարվեն արդար, օրենքով, սիրով և ճիշտ, սա է «Ոսկե կանոն»–ը, և եթե բոլորը հետևեն այդ կանոնին, խնդիրներն աշխարհում անհամեմատ կպակասեն: Այս արժեքը պետք է ուղենշային լինի բոլորի համար:Եվ միանգամայն տրամաբանական է, որ սա երեխան իմանում է հենց դպրոցում:

ՀԵՊ առարկայի դասավանդման ընթացքում կարևոր դեր ունեն քրիստոնեական պատվիրանները, որոնք ևս ձևավորում են մարդու արժեքային համակարգը: Խոսքը հայտնի 10 պատվիրանների մասին է. «1. Ես եմ քո Տեր Աստված, ինձանից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար, 2. Վերևում՝ երկնքում, ներքևում՝ երկրի վրա, և երկրի խորքի ջրերի մեջ եղած որևէ բանի նմանությամբ քեզ կուռքեր չպիտի կերտես,
3. Քո Տեր Աստծո անունը զուր տեղը չպիտի արտասանես,
4. Հիշիր շաբաթ օրը, որպեսզի սուրբ պահես այն,
5.Պատվիր քո հորն ու մորը,
6.Մի սպանիր,
7.Մի շնանար,
8.Մի գողանար,
9.Քո հարևանի դեմ սուտ վկայություն մի տուր,
10. Ոչ քո մերձավորի տան, ոչ նրա ագարակի վրա աչք մի ունեցիր»:

Սրանք, փաստորեն հասարակության արժեքային, բարոյական սկզբունքներ են, որոնք պետք է ուղենշային լինեն մարդու կյանքում:

Ուսուցանող է նաև քրիստոնյա աշխարհում հայտնի 7 առաքինությունների ընդգրկումը ծրագրում, որոնք կարող ենք այս համատեքստում անվանել արժեքներ՝ խոնարհություն, աշխատասիրություն, եղբայրասիրություն, ողորմածություն, հեզություն, ժուժկալություն և ողջախոհություն: Հետաքրքիր է, որ, փաստորեն քրիստոնեության մեջ առանձնացվում են նաև սրանց հականիշները՝ յոթ մեղքերը, որոնք կարող ենք անվանել յոթ հակաարժեքներ՝ հպարտություն, ծուլություն, նախանձ, ագահություն, բարկություն, որկրամոլություն, բղջախոհություն:

Եվ, իհարկե քրիստոնեական աշխարհի արժեհամակարգի հիմքը՝ «Սիրեցեք միմյանց» պատվիրանը: Սերը քրիստոնեական աշխարհի բարձրագույն արժեքն է, կանգնած է ամենավերևում: Սերը ազատություն է, ինչն էլ նաև ներկայիս աշխարհի գլխավոր արժեքն է:

Ուշագրավ է, որ ՀԵՊ ծրագրում անդրադարձ կա նաև մնայուն և հավերժ արժեքներին, կան նաև բացարձակ արժեքներ, առանց որոնց անհնար է պատկերացնել մարդկային հասարակության գոյությունը: Իբրև բացարձակ արժեքներ են նշվում հավատը, հույսը, սերը, իսկ սրանցից բխում են բարիք գործելը, հավատարմությունը, պատասխանատվությունը, հայրենասիրությունը և այլն[9]:

Կարևոր է նաև, որ այս ամենը ներկայացված է ոչ միայն առանձին՝ կտրված այլ կրոններից ու գաղափարախոսություններից: ՀԵՊ առարկայի ծրագրում աշակերտը ծանոթանում է նաև ինչպես մինչքրիստոնեական աշխարհի գաղափարներին ու արժեքներին, օրինակ՝ շումերական, եգիպտական արժեքներից էին օրինականությունը, կարգուանոնը, թույլերի իրավունքների պաշտպանությունը, չափավորությունը, հավատարմությունը: Հեթանոս հայերը հարգում էին ազատությունն ու հայրենասիրությունը, ամուսնական ու ընտանեկան հավատարմությունը, ուղղամտությունը, ինչի մասին վկայում են մեր հին աստվածների մասին պատմությունները: Հին Հունաստանում առկա արժեքներն են ներկայացված, մասնավորապես բարոյագիտությունը, որը նույնպես արժեքների համակարգ է, ըստ Արիստոտելի, օրինակ, առաքինություններից ամենակատարյալը արդարությունն է:

3.2. Հայ ժողովրդի արժեհամակարգի արտացոլումը ՀԵՊ առարկայի ծրագրում

ՀԵՊ առարկայի դասագրքերում համաքրիստոնեական ու համամարդկային արժեքներից բացի, իրնց ուրույն տեղն ունեն այն արժեքները, որոնք պետք են հայ մարդուն՝ ազգային ինքնությունը գիտակցելու և պահպանելու համար:

Ցանկացած ազգ ունի արժեքներ, որոնք ամբողջացնում ու ձևավորում են տվյալ հասարակության ազգային դիմագիծը: Այն արժեքները, որոնք դառնում են տվյալ ազգի արժեհամակարգի հիմքը, դառնում են հիմնարար արժեք, որոնցով էլ որոշվում է այդ

[9] Հայոց եկեղեցու պատմություն դասագիրք, 9-րդ դասարան, Երևան, 2005:

էթնիկական խմբի ընդհանուր նկարագիրը: Մեր ժողովրդի ազգային արժեհամակարգի հիմնարար արժեքներն են ազգի ծագումնաբանությունը, ազգը՝ որպես հավաքական

ամբողջություն, հայրենիքը՝ որպես ազգի սեփական ընդհանուր կենսատարածք, հավատը՝ որպես ընդհանուր հոգևոր հայրենիք, միասնական մշակույթը, պետականությունը և հասարակական համերաշխության սկզբունքները՝ բարոյականության, ազատության ու արդարության վերաբերյալ նրա պատկերացումները[10]:

Հայ ժողովրդի համար արժեք է ինքնին հայոց եկեղեցին, որը նաև Ազգային եկեղեցի է, որովհետև նրան վիճակված էր լուծել բազմաթիվ ազգային խնդիրներ, քանի որ դարերով զրկված լինելով պետականությունից՝ եկեղեցին էր ստանձնել այդ գործառույթները: Զուր չէ, որ մեր բանաստեղծներն ու գրողները ջերմ տողեր են ձոնել եկեղեցուն:

Երկրորդ՝ արժեք է հայոց եկեղեցու ճարտարապետությունը, այժմ մեր զբոսաշրջության զարդերը հենց մեր եկեղեցիներն են, որոնք իրենց պարզությամբ ու կատարելությամբ գրավում են հազարավոր մարդկանց աշխարհի տարբեր ծայրերից: Ու մեծ ուսուցողական արժեք ունի այն, որ աշակերտները գրքում տեղեկանում են այդ ճարտարապետության հիմքերին, սկզբունքներին ու այս կամ այն դետալի նշանակությանը: Եվ մեր եկեղեցիները մեր գեղանկարիչների կտավներում տեսնում ենք նոր գեղեցկությամբ:

Արժեք են մեր եկեղեցու արարողություններն ու ծիսակարգերը, խորհուրդները՝ մկրտություն, դրոշմ, հաղորդություն, պսակ և այլն, որոնք եկեղեցին կատարում է շարունակաբար դարեր ի վեր: Մասնավորապես, եթե անդրադառնանք պսակին, ապա դա ընտանիքի խորհուրդն է, ընտանիք՝ որպես արժեք: Եվ այժմ, երբ շատ երկրներում քանդվում է հենց ընտանիքը, այս խորհուրդի՝ ընտանիքի արժեքը գնահատելը չափազանց կարևոր է հայ մարդու համար:

Այս շարքում պետք է հատուկ ընդգծենք ազգային ու եկեղեցական տոները, որոնք նույնպես մեծ արժեք են հայ ժողովրդի համար, կարելի է ասել՝ ժողովրդի ողնաշարն են, որոնց վրա կառուցվում է ողջ ազգային կյանքը: Եվ ուշագրավ է, որ մեր եկեղեցական տոների մեջ պահպանվել են տոների ժողովրդական մասերը, և դա տոնը ավելի մոտ է

[10] Հայոց եկեղեցու պատմություն դասագիրք, 10-րդ դասարան, Երևան, 2013:

դարձնում հայ մարդուն, միահյուսում է ազգային արմատներն ու քրիստոնեական մեկնությունը: Հիշենք Տյառնընդառաջի, Հարության, Քրիստոսի Պայծառակերպության կամ Վարդավառի տոները, և ուսանելի և ճանաչողական է, որ այս տոների խորհուրդն ու արարողակարգը ներկայացվում է դասընթացի ժամանակ:

Սակայն կան նաև զուտ մեր եկեղեցուն հատուկ տոներ, որոնք հայ ժողովրդի արժեքն ու ձեռքբերումն են: Հայ եկեղեցու համար կարևորներից այս շարքում Սուրբ Վարդանանց տոնն է, պատմական անձինք, որոնց շնորհիվ հայ ժողովուրդը պահպանեց իր կրոնն ու ինքնությունը:

Կարևոր տոներից է Թարգմանչաց տոնը. Հայ եկեղեցին արժևորել է մեր գրերի գյուտի հեղինակի՝ Մեսրոպ Մաշտոցի ու թարգմանիչների գործը, նրանց սրբացրել ու մինչ օրս նանց գործը անմահ է սերունդների հիշողության մեջ, այդ գործը դարձել է կարևոր արժեք մեր ժողովրդի համար: Հիշենք, որ նրանց կատարած Աստվածաշնչի թարգմանությունը ստացել է «Թարգմանությունների թագուհի» անունը:

Եվ թարգմանչաց գործը սերտորեն առնչվում է հայ ժողովրդի մեկ այլ կարևոր արժեքի՝ գրերի, այդ կերպ՝ լեզվի հետ: Աշակերտներին դասընթացի ընթացքում նյութի միջոցով բացատրվում է, որ Հայոց գրերի գյուտը սոսկ հերթական իրադարձություն չէր, այն հայ մարդու ինքնության պահպանման հիմնասյունն էր: Զուր չէ, որ Մաշտոցի տառերն անվանում են նաև 36 զինվորներ, որոնք մշտարթուն պահպանում են մեզ, մեր տեղը աշխարհում: Բացի այդ, մեր գրերը մեր մշակույթի անքակտելի մասն են: Յուրաքանչյուր ժողովուրդ իր մշակույթը ստեղծում, պահպանում ու փոխանցում է լեզվի միջոցով: Եվ քրիստոնեության ընդունումն ու հայոց գրերի գյուտը դարձան հայ ժողովրդի հոգևոր–մշակութային վերելքի հիմքը. 5-րդ դարը դարձավ հայոց մշակույթի Ոսկեդարը: Այդ ժամանակից սկսած՝ ձևավորվեց հայ քրիստոնեական ազգային մշակույթը:

Մշակույթը ևս հզոր արժեք է, այն կատարում է ազգաստեղծման գործառույթ: Հայ ժողովրդի կերտած մշակույթը դրսևորվում է պատմական բոլոր ժամանակաշրջաններում՝ ներկայացնելով ժողովրդի աշխարհընկալումը, մտածելակերպն ու գործելակերպը՝ ճարտարապետություն, մատենագրություն, մանրանկարչություն, երաժշտություն, պոեզիա: Բոլոր այս ճյուղերով հայ մշակույթը հավասար երկխոսության մեջ է մտել

համաշխարհային մշակույթի հետ: Ասվածը վերաբերում է նաև կրթության ոլորտին: Եվ այս երկու ոլորտներում հայ եկեղեցին ունեցել է իր հիմնարար դերը:

Հայրենիքը, ինչպես նշեցինք, ազգի կենսատարածքն է, և այս հասկացության հետ անքակտելի է հայրենասիրություն հասկացությունը՝ իբրև արժեք: Այս հասկացությունը հայերի մոտ փոխանցվում է սերնդեսերունդ: Եվ այստեղ ՀԵՊ ծրագրում բերվում է ռազմիկի պատվո վարքականոնը՝ արժեքների մի համակարգ, որը պարտադիր էր հայ ռազմիկի համար:

Պատմիչներ Փավստոս Բյուզանդը և Մովսես Խորենացին մեջբերում են հայոց սպարապետների պատգամ-հրահանգները: Բյուզանդը իր «Հայոց պատմության» մեջ մեկ առ մեկ թվագրում է հայ զինվորականի՝ Հայաստան պետության և հայ ազգի առջև ստանձնած գլխավոր հանձնառությունները, որոնք են.

1. Հավատարմություն և անձնուրաց ծառայություն Հայաստան աշխարհին, երկրին ու թագավորությանը:
2. Ասպետական պատվի և համարումի («քաջի անվան») անբիծ պահպանում, հարկ եղած դեպքում՝ նաև կյանքի գնով:
3. Հավատարմություն և անձնուրաց ծառայություն Հայաստանի պետական համակարգի ամենակարևոր նվիրագործված հաստատությանը՝ Հայաստանի թագավորին (Արշակունի «բնիկ տերերին»):
4. Հավատարմություն և անձնուրաց ծառայություն Հայաստանի ժողովրդին, բոլոր բնակիչներին անխտիր՝ անկախ նրանց սոցիալական ծագումից և դիրքից:
5. Քրիստոնեական հավատի և ազգային եկեղեցու նկատմամբ բարեպաշտ վերաբերմունք և դրանց անձնուրաց պաշտպանություն:
6. Նվիրվածություն ընտանիքին:
7. Նվիրվածություն տոհմակիցներին:
8. Հավատարմություն զինակիցներին:[11]

Նաև այս վարքականոնի շնորհիվ հայրենասիրությունը ամրապնդվել է հայ մարդու մեջ՝դառնալով անուրանալի արժեք:

[11] Հայոց եկեղեցու պատմություն դասագիրք, 10-րդ դասարան, Երևան, 2013:

Եվ, ի վերջո, հայոց արժեհամակարգի կարևոր բաղադրիչն է ազատ, անկախ, և ազգային պետությունը: Հետաքրքիր է, որ շատ տասնամյակներ եկեղեցին փոխարինել է պետությանը, սակայն խորհրդային տարիներին կար պետություն, որտեղ եկեղեցին անտեսված էր: Եվ միայն 1991թ-ին անկախության ձեռքբերումից հետո վերականգնվեցին Հայ Առաքելական եկեղեցու իրավունքները, և հիմա նորից մեր երկիրը ունի երկու սյուներ՝ պետություն և եկեղեցի: Դասագրքում մանրամասն ներկայացված է այդ տարիների ժամանակագրությունը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առաջին նախագահի երդման արարողությունը և Վազգեն Ա կաթողիկոսի կողմից նրան օրհնելը:

Եզրակացություններ, առաջարկություններ

Ամփոփելով աշխատանքը՝ կարող ենք փաստել, որ առանց արժեքային համակարգի հասարակությունը, առավել ևս՝ դեռահասը նման է առանց ղեկ նավի, որը լողում է, բայց ինչպես և ուր՝ անհասկանալի է: Հենց արժեքային համակարգն է այն ուղենիշը, որը օգնում է մարդուն գնալ առաջ ու զարգանալ: Նույնը առավել լայն իմաստով վերաբերում է նաև առանձին պետություններին: Եվ այս հարցում կրթության դերն անուրանալի է, ընդ որում՝ բոլոր առարկաներն էլ այստեղ ունեն իրենց դերը, իսկ Հայ եկեղեցու պատմություն առարկան, անմիջապես խարսխված լինելով ազգային արժեքների վրա, առավելապես:

ՀԵՊ առարկան, փաստորեն, երկու խնդիր է լուծում. նախ՝ աշակերտներին ծանոթացնում է համաքրիստոնեական արժեքներին և այդ կերպ նրանց մոտեցնում է համընդհանուր, համամարդկային արժեքներին, մյուս կողմից նրանց ներկայացնում է հայ ժողովրդի ու հայ եկեղեցու հիմքերն ու կանոնները, արժեքները, որովհետև լինելով աշխարհի քաղաքացի՝ նրանք նախևառաջ հայ են, Հայաստանի քաղաքացի են և պարտավոր են իմանալ ու հարգել մեր ժողովրդի արժեքները:

Հայ ժողովուրդն ու Հայաստան աշխարհը վերջին տարիներին ապրում են դժվարին ժամանակներ, և ժամանակի հրամայականն է կրթել ու դաստիարակել ազգային մտածողությամբ ու արժեքներով տոգորված սերունդ, նրանց մեջ ներարկել հայրենասիրություն, համախմբվածություն, առաջ ընթանալու և զարգանալու կամք:

Մեր ժողովրդի անցած պատմությունը մեծ ծառայություն է մատուցում ներկայիս սերնդին, որովհետև հայրենասիրության ու ամուր կամքի փայլուն դրվագները բազմաթիվ

են, այդ թվում՝ եկեղեցու ծառայողների կողմից դրսևորված, պարզապես հարկ է դրանք հասկանալով ու դասեր քաղելով՝ ընթանալ առաջ: Կայացած և ուժեղ պետություն ունենալու համար նախ պետք են կայացած քաղաքացիներ: Եվ այստեղ է, որ մեծանում է կրթության դերը, որն էլ իր հերթին պետք է հայ ժողովրդին անհրաժեշտ արժեհամակարգ ձևավորի սովորողների մեջ: Ինչպես նկատեցինք շարադրանքից, ՀԵՊ դասագրքերում արդեն իսկ ներառված են նման դրվագներ, որոնք կարող են ուղենշային լինել:

Սակայն ասվածը չի նշանակում, որ դպրոցական դասագրքերում, հանրակրթական և առարկայական չափորոշիչները կատարլագործվելու կարիք չունեն: Ելներով դրանից՝ կարող ենք կատարել հետևյալ առաջարկությունները.

1. Կարծում ենք, որ պետք է ավելի շատ ուշադրություն դարձնել ազգային արժեհամակագի ձևավորման հարցերին, ավելացնել հայագիտական առարկաներին հատկացվող ժամաքանակը:
2. Հնարավորություններ ստեղծվեն աշակերտների համար, որպեսզի նրանք ավելի հաճախակի գնան արշավներ դեպի պատմամշակութային վայրեր, հնավայրեր, մոտիկից տեսնեն ու ճանաչեն հայրենիքի ամեն անկյունը:
3. Ավելի շատ լինեն նախագծային աշխատանքներ տարբեր թեմաներով:
4. ՀԵՊ դասագրքերի հատկապես 8–րդ և 9–րդ դասարանների դասագրքերը բեռնաթափել պատմական դրվագներից, փոխարենը ավելացնել թեմաներ արժեհամակարգի, ազգային արժեքների մասին: Այսինքն՝ այն թեմաներն ավելացնել, որոնք ոչ թե սերտում են ենթադրում, այլ մտածելու տեղիք են տալիս և դատողություններ անելու են դրդում:
5. Արժեհամակարգին վերաբերող այն թեմաները, որոնք կան ավագ դպրոցի դասագրքերում, ավելի հասկանալի զետեղել հիմնական դպրոցի 8 և 9–րդ դասարանների թեմաների մեջ, քանի որ այդ տարիքն է երեխայի ձևավորման, կայացման տարիքը: Որքան նրանք շատ ծանոթանան մեր ազգային և համազգային հիմնարար արժեքներին, այնքան ավելի շատ կգնահատեն, կսիրեն, կնվիրվեն, կշենացնեն, կպահեն և կպահպանեն իրենց ժառանգված հայրենիքը:
6. Նաև օգտակար կլինի, եթե հոգևորականները հաճախ այցելեն դպրոցներ, պատասխանեն աշակերտների հարցերին, աշակերտներին ուղեկցեն տարբեր

վայրեր ու տան բացատրություններ, այլ կերպ ասած՝ ներգրավվեն ուսումնական պրոցեսում:

7. Եվ, իհարկե, ավելացվեն ՀԵՊ դասաժամերը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Լեզվի ինստիտուտ, Եր., 1969-1980:
2. Հայոց եկեղեցու պատմություն դասագիրք, 10-րդ դասարան, Երևան, 2013:
3. Հայոց եկեղեցու պատմություն դասագիրք, 9-րդ դասարան, Երևան, 2005:
4. Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Մ. Սուքիասյան, Եր., 1967:
5. Հանրակրթական հիմնական դպրոցի (5-9-րդ դասարաններ) «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի չափորոշիչ
6. Հանրակրթության պետական կրթակարգ, http://www.irtek.am/views/act.aspx?aid=25829
7. Маслов С.И. Эмоционально-ценностное образование младших школьников. Тула, 1999, с.124.
8. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84
9. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6
10. http://www.ysu.am/files/Article_Anush_Mkrtchyan.pdf:
11. https://www.imdproc.am/p/hayoc-ekeghecu-patmutyun/5-dasaran/nvor-ktakaran-38112/sermnacani-vorvomneri-araknery-38119/re-f206c704-f2da-4e89-8094-97e1924466c7